

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/5

22 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ասատուր Միկոյանի 07.07.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար վճարված արտոնագրային վճարի գումարը սոցիալական ապահովության վաճառի գծով պարտավորությունների դիմաց հաշվանցելու վերաբերյալ:

Ա/Ձ Ասատուր Միկոյանի դիմումում բերված փաստարկները.

Որպես արտոնագրային վճար վճարող Ա/Ձ Ասատուր Միկոյանը վճարել է 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար նախատեսված արտոնագրային վճարի գումարները:

Ըստ դիմումի, Ա/Ձ Ասատուր Միկոյանը վերը նշված ամիսներին մեքենան վթարված լինելու պատճառով փաստացի չի աշխատել: Այդ իսկ պատճառով չի ներկայացրել նաև արտոնագրի համար հայտարարություն:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ասատուր Միկոյանը խնդրում է իր կողմից վճարված արտոնագրային վճարի գումարը՝ 20.500 դրամ, հաշվանցել սոցիալական ապահովության վաճառի գծով պարտավորությունների դիմաց:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Ասատուր Միկոյանը զբաղվում է տաքսի ծառայությունների մատուցմամբ:

Ա/Ձ Ասատուր Միկոյանը վճարել է 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար նախատեսված արտոնագրային վճարի գումարները՝ ընդամենը 20.500 դրամ: Ա/Ձ Ասատուր Միկոյանի պնդմամբ, իր կողմից շահագործվող ավտոմեքենան վթարված լինելու պատճառով այդ ամիսներին գործունեություն չի իրականացվել, ինչպես նաև չի ներկայացվել արտոնագիր ստանալու վերաբերյալ հայտարարություն:

Հանձնաժողովի անդամների Ա/Ձ Ասատուր Միկոյանին ուղղված հարցին, թե առկա է արդյոք որևէ հիմնավոր ապացույց 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին իր կողմից շահագործվող ավտոմեքենան վթարված լինելու վերաբերյալ, հինչեց պատասխան, որ նման ապացույց առկա չէ:

Քննարկվող դեպքում առկա չեն հիմնավոր ապացույցներ այն մասին, որ 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Ա/Ձ Ասատուր Միկոյանի կողմից շահագործվող ավտոմեքենան վթարված լինելու պատճառով վերջինիս կողմից փաստացի գործունեություն չիրականացնելու վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար վճարված արտոնագրային վճարը՝ գումարով 20.500 դրամ, սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունների դիմաց հաշվանցելուն, ապա նշվեց, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նման ընթացակարգ նախատեսված չէ:

Միաժամանակ հարկ է նշել, որ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը սահմանված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածով («Հարկերի հաշվանցման և/կամ վերադարձման կարգն ու ժամկետները»):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված N 1-ը չի նախատեսում արտոնագրային վճարի գծով ավելի վճարված գումարի հաշվանցում այլ հարկային պարտավորությունների հաշվին: Արտոնագրային վճարի գծով ավելի վճարված գումարը սահմանված կարգով ենթակա է վերադարձման հարկ վճարողին, որը հետագայում կարող է հարկ վճարողի կողմից ուղղվել այլ պարտավորությունների մարմանը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ա/Ձ Ասատուր Միկոյանի 07.07.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը՝ 2012 թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար վճարված արտոնագրային վճարը՝ գումարով 20.500 դրամ, սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունների դիմաց հաշվանցելու վերաբերյալ, մերժել:

2. Ավելի վճարված արտոնագրային վճարի գումարն այլ պարտավորությունների մարմանը կարող է ուղղվել սահմանված կարգով ավելի վճարված գումարը ետ ստանալու միջոցով:

Հանձնաժողովի նախագահ՝

